# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com


## ՈՐՈՇՈՒՄ

« 27 » հունիսի 2023թ. № **75 -Ա**

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 13062023-06-0041 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0260-0054 կադաստրային ծածկագրով 0,09 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության 4-րդ կարգի անջրդի վարելահող հողատեսքի հողամասը, գյուղատնտեսությամբ զբաղվելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 138 375 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 153,75 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

| ԿՈՂՄ ( 13 ) | ԴԵՄ ( 0 ) | ՁԵՌՆՊԱՀ ( 1 ) |
|---|---|---|
| ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ | | ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ |
| ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ | | |
| ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ | | |
| ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ | | |
| ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ | | |
| ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ | | |
| ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ | | |
| ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ | | |

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՋԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2023թ. հունիսի 27
ք. Սպիտակ